«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ

ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՔՈՂՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք. Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 5

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ 5

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ 7

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ 8

ԲԱԺԻՆ 5.1. ԲԵՌԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱՄ ՎՆԱՍՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՆՁԻ ԱՌՋԵՎ 8

ԲԱԺԻՆ 5.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՆՁԻ ԱՌՋԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ ՀԱՄԱՐ 9

ԲԱԺԻՆ 5.3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻՆ, ԿՅԱՆՔԻՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ԲԵՌՈՎ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ 10

ԲԱԺԻՆ 5.4. ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՌԱՔՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՏԵՅՆԵՐԻ ՏԻՐՈՋ ԱՌՋԵՎ՝ ԿԱՊՎԱԾ ԿՈՆՏԵՅՆԵՐԻ ԿՈՐՍՏԻ, ՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱՄ ՎՆԱՍՄԱՆ ՀԵՏ 10

ԲԱԺԻՆ 5.5. ՄԱՔՍԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ 10

ԲԱԺԻՆ 5.6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ 10

ԲԱԺԻՆ 5.7. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐ 11

ԲԱԺԻՆ 6. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻՑ 11

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ 15

ԲԱԺԻՆ 8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16

ԲԱԺԻՆ 9. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ 18

ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ 20

ԲԱԺԻՆ 11. ՓՈԽԱԴՐՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ 25

ԲԱԺԻՆ 12. ԱՌԱՔՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ 26

ԲԱԺԻՆ 13. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ 28

ԲԱԺԻՆ 14. ՎՆԱՍԻ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ) 28

ԲԱԺԻՆ 15. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ 29

ԲԱԺԻՆ 16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ 30

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1" Սույն «Բեռնափոխադրողների և առաքողների քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության կանոնները» (այսուհետ՝ Կանոններ), մշակված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2" Բեռնափոխադրողների և առաքողների քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ոչ կյանքի Ապահովագրության տեսակի «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասի մեջ:

1.3" Կանոնները հանդիսանում են բեռնափոխադրողների և առաքողների քաղաքացիական պատասխանատվության կամավոր Ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի (այսուհետ՝ Ապահովագրության պայմանագիր) անբաժանելի մասը: Ապահովագրության պայմանագիրը կարող է բովանդակել կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշված այլ պայմաններ, որոնք, սակայն, չպետք է հակասեն Կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:

1.4" Կանոններով Ապահովադիր են ճանաչվում ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք բեռնափոխադրողների և առաքողների պատասխանատվության ապահովագրության պայմանագիր են կնքել «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ (այսուհետ՝ Ապահովագրող) հետ:

1.5" Կանոնների համաձայն՝ կարող է ապահովագրվել բեռնափոխադրողի կամ առաքողի գործունեություն իրականացնող Ապահովադրի կամ այլ անձի (Ապահովագրված անձ) պատասխանատվությունը: Բոլոր դրույթները, որոնք Կանոնների համաձայն վերաբերում են Ապահովադրին, տարածվում են Ապահովագրված անձանց վրա, եթե Ապահովագրության պայմանագրից այլ բան չի բխում:

1.6" Կանոններում գործածվող հիմնական հասկացություններն են՝

• Բեռնափոխադրող - այն իրավաբանական կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձն է, որը բեռի փոխադրման պայմանագրով պարտավորություն է ստանձնել փոխադրել ուղարկողի կողմից իրեն վստահված բեռը նշանակետ և այն հանձնել բեռը ստանալու իրավասու անձին:

• Առաքող - այն իրավաբանական կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձն է, որը տրանսպորտային առաքման պայմանագրով իրականացնում կամ կազմակերպում է տրանսպորտային առաքման ծառայությունների իրականացումը:

• Ենթաառաքող – այն իրավաբանական կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձն է, որը տրանսպորտային առաքման ծառայությունների իրականացման համար ներգրավվել է առաքողի կողմից:

• Իրավասու անձ - այն անձն է, ով իրավունք ունի Ապահովադրին ներկայացնել պահանջներ՝ կապված բեռի կորստի, ոչնչացման կամ փոխադրման և (կամ)

տրանսպորտային առաքողի պայմանագրով նախատեսված այլ պարտավորությունների չկատարման արդյունքում բեռը վնասելու կամ վնաս պատճառելու հետ:

• Շահառու - այն անձն է, ում պատճառվել է վնաս Ապահովադրի կողմից բեռի փոխադրման կամ առաքման արդյունքում: Որպես Շահառու կարող է հանդիսանալ բեռի սեփականատերը, առաքողը, որը հատուցել է վնասը բեռի սեփականատիրոջը, ինչպես նաև այլ անձինք, ում վնաս է պատճառվել Ապահովադրի կողմից բեռի փոխադրման կամ առաքման ընթացքում:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1" Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված Ապահովադրի կամ այլ անձի, որի պատասխանատվությունն ապահովագրված է ապահովագրության պայմանագրով, բեռը փոխադրելիս կամ տրանսպորտային առաքման ծառայություն մատուցելիս երրորդ անձանց գույքին, բեռին, կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման պարտավորությունների հետ:

2.2" Ապահովադրի գործունեությունը, որի հետ կապված իրականացվում է ապահովագրություն, նշվում է Ապահովագրության պայմանագրում:

2.3" Եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, սեփական և (կամ) վարձակալված տրանսպորտային միջոցներով բեռների փոխադրման և առաքման հետ կապված Ապահովադրի պատասխանատվության ռիսկը համարվում է ապահովագրված այն ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման դեպքում, որոնք նշված են Ապահովագրության պայմանագրում:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ

3.1" Կանոնների հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրի համաձայն Ապահովագրողը պարտավորվում է Ապահովագրության պայմանագրով նախատեսված որոշակի վճարի (այսուհետ՝ ապահովագրավճար) դիմաց Ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում հատուցել երրորդ անձանց այդ պատահարի հետևանքով պատճառված վնասները:

3.2" Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովադրի գրավոր դիմում-հարցաթերթիկի հիման վրա, որի ձևը սահմանվում է Ապահովագրողի կողմից:

3.3" Ապահովագրողը դիմումը ստանալուց հետո իրավունք ունի Ապահովադրից պահանջել՝

3"3"1. ապահովել ապահովագրվող բեռի զննում իրականացնելու հնարավորությունը,

3"3"2. տրամադրել լրացուցիչ տեղեկություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կարող են որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և համապատասխանաբար դրա հետևանքով հնարավոր վնասների չափի հնարավոր մեծության վրա

3.4" Անհրաժեշտության դեպքում Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել Ապահովադրի բանավոր դիմումի հիման վրա, պայմանով, որ Ապահովագրության պայմանագրի տեքստում կընդգրկվեն ապահովագրության դիմումի մեջ ներառված բոլոր տվյալները:

3.5" Եթե Ապահովագրության պայմանագրի կնքումից հետո պարզվում է, որ Ապահովադիրը Ապահովագրության պայմանագրի կնքման պահին և Ապահովագրողի հարցադրումների պատասխաններում նախապես հայտնել է կեղծ կամ անարժանահավատ տվյալներ, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծել Ապահովագրության պայմանագիրը և պահանջելու հատուցել դրա կապակցությամբ իր կրած վնասները և ծախսերը:

3.6" Բեռի կամ նրա մի մասի վնասվածքի դեպքում Ապահովագրողը կրում է պատասխանատվություն վնասի վերականգնման արժեքի չափով, բայց ոչ ավելի քան վնասված բեռի արժեքը:

3.7" Եթե որպես Ապահովադիր հանդես է գալիս բեռնափոխադրողը (առաքող կամ տրանսպորտային կազմակերպությունը), ապա Ապահովագրողի ապահովագրական պատասխանատվության չափը չի կարող գերազանցել բեռնափոխադրողի փաստացի պատասխանատվության չափը բեռի սեփականատիրոջ նկատմամբ:

3.8" Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է՝

ա) Ապահովագրության պայմանագրում նշված ժամկետի լրանալուց հետո,

բ) Ապահովագրողի կողմից Կանոնների և դրանց հիման վրա կնքված Ապահովագրության պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելուց հետո,

գ) կողմերի համաձայնությամբ

դ) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

3.9" Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Ապահովագրության պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ գրավոր ծանուցելով Ապահովագրողին:

3.10" Ապահովադրի պահանջով Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Ապահովագրության պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Ապահովագրության Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Ապահովագրության պայմանների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

3.11" Ապահովագրողի պահանջով Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից Ապահովագրության պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Ապահովագրության պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Ապահովագրության պայմանագրի չգործած օրերի համար հաշվարկված Ապահովագրության Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 20%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 20\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

3.12" Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Ապահովագրության պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար և ապահովագրական հատուցման հայցը Ապահովագրողի կողմից դեռևս չի կարգավորվել կամ ստացել է տվյալ Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրավճարի կեսից ավելի չափով ապահովագրական հատուցում:

3.13" Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել դադարեցման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1" Կանոնների համաձայն՝ ապահովագրական ռիսկ է ճանաչվում բեռի փոխադրման ընթացքում կամ տրանսպորտային առաքման ծառայություններ մատուցելիս Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվության ռիսկը՝ կապված երրորդ անձանց գույքին, կյանքին կամ առողջության պատճառած վնասի հետ:

4.2" Կանոնների համաձայն՝ ապահովագրական պատահար է համարվում Ապահովադրի կողմից բեռը փոխադրելիս կամ տրանսպորտային առաքման ծառայություններ մատուցելիս՝ Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում, Ապահովադրի համար պատահական, անկանխատեսելի իրադարձության (այսուհետ՝ իրադարձություն) հետևանքով երրորդ անձանց գույքին, կյանքին կամ առողջությանը վնասի պատճառումից բխող Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվության առաջացումը՝ հետևյալ պայմանների առկայությամբ՝

4"2"1. Փոխադրումը/առաքումը սկսվել է Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում,

4"2"2. Իրադարձությունը տեղի է ունեցել Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում,

4"2"3. Շահառուն Ապահովադրին օրենքով սահմանված կարգով պահանջ է ներկայացրել ընդդեմ Ապահովադրի, դիմել է դատարան կամ Շահառուի նկատմամբ Ապահովադրի՝ պատճառված վնասները հատուցելու պարտավորությունը հաստատվել է

օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, կամ Ապահովադիրը հատուցել է պատճառած վնասը, և նման հատուցումը հիմնավորված է ճանաչվում Ապահովագրողի կողմից,

4"2"4. Ապահովադիրը պահպանել է Ապահովագրության պայմանագրի և Կանոնների պայմանները,

4.3" Մի քանի պահանջների ներկայացման դեպքում հատուցման ընդհանուր գումարը չի կարող գերազանցել Ապահովագրության պայմանագրով սահմանված ընդհանուր ապահովագրական գումարը:

4.4" Ապահովագրված ռիսկերը նշվում են Ապահովագրության պայմանագրում:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ

5.1" Ապահովագրողի պատասխանատվության ծավալը որոշվում է Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվության հիման վրա և շրջանակներում՝ իրական վնասի համար՝ կապված բեռի փոխադրման կամ առաքման հետ, պայմանով, որ այդպիսի քաղաքացիական պատասխանատվությունն առաջանում է՝

5.1.1" միջազգային տրանսպորտային կոնվենցիաների դրույթներով,

5.1.2" Ապահովադրի համար պարտադիր կարգով կիրառելի ազգային տրանսպորտային օրենսդրությամբ,

5.1.3" առևտրային գործունեության ստանդարտ պայմաններով՝ ընդունված տրանսպորտային գործունեություն իրականացնողների ազգային ասոցիացիայի, Հայաստանի տրանսպորտային առաքողների միության կողմից, որի անդամ է հանդիսանում Ապահովադիրը,

5.1.4" Առաքողների Ասոցիացիաների Միջազգային Ֆեդերացիայի (այսուհետ՝ ՖԻԱՏԱ) տրանսպորտային բեռնագրով կամ ավիաբեռնագրով, պայմանով, որ այն վերարտադրում է Օդային Տրանսպորտի Միջազգային Ասոցիացիայի (ԻԱՏԱ) սահմանած ավիաբեռնագիրը,

5.1.5" Ապահովադրի սեփական առաքման բեռնագրի կամ առաքման ստացականի համաձայն, պայմանով, որ դրանում պարունակվող պայմանները Ապահովադրի վրա չեն դնում առավել խիստ պարտականություններ և պատասխանատվություն, քան նրանք, որոնք նախատեսվում են ՖԻԱՏԱ-յի ստանդարտ տրանսպորտային բեռնագրով կամ Ապահովադրի նկատմամբ ազգային օրենսդրության դրույթներով պարտադիր կիրառելի դրույթներով,

5.1.6" Ապահովագրության պայմանագրի համաձայն:

ԲԱԺԻՆ 5.1. ԲԵՌԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱՄ ՎՆԱՍՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՆՁԻ ԱՌՋԵՎ

5.1.1. Ըստ սույն բաժնի՝ Ապահովադրի պատասխանատվության ռիսկն իրավասու անձի առջև կարող է ապահովագրվել կորստի (պակասորդի), ոչնչացման կամ բեռի վնասման դեպքում, որը տեղի է ունեցել ցանկացած պատահականության կամ վտանգի արդյունքում, Ապահովադրի կողմից բեռի ընդունման պահից մինչև այն ստացողին հանձնելը (բացառությամբ այն դեպքերի, որոնք ներկայացված են 5.1.2 կետում և Կանոնների 6-րդ բաժնում):

5.1.2. Ապահովադրի պատասխանատվության ռիսկն իրավասու անձի առաջ կարող է լրացուցիչ ապահովագրվել կորստի (պակասորդի), ոչնչացման կամ բեռի վնասման դեպքում, որի պատճառ են հանդիսանում.

5"1"2"1. Բեռի հանձնումը ոչ իրավասու ստացողին:

Վերոնշյալ ռիսկը համարվում է ապահովագրված Կանոններին համապատասխան՝ հետևյալ պահանջները պահպանելու պայմանով՝

ա) Բեռը ժամանակավոր պահեստավորելով մաքսային պահեստում՝ Ապահովադիրը ստացել է բեռի պահեստավորման ընդունումը հաստատող համապատասխան փաստաթուղթ (պահեստի աշխատողի ստորագրությամբ, հաստատված պահեստի կնիքով), ինչպես նաև մաքսային մարմինների կողմից ազգային մաքսային օրենսդրության պահանջներին համապատասխան ձևակերպած փաստաթղթերը.

բ) Բեռը ստացողին փոխանցելիս՝ Ապահովադիրը ստացել է ապրանք ստացողի ստորագրությամբ և բեռը ստացողի կնիքով հաստատված ապրանքատրանսպորտային բեռնագրի օրինակը: Կնիքի բովանդակությունը պետք է համապատասխանի ապրանքատրանսպորտային փաստաթղթի համապատասխան դաշտում պարունակվող բեռը ստացողի տվյալներին.

գ) Բեռի հանձնումը ստացողին իրականացվել է բեռը ստացող անձին տրված գործող լիազորագրի ներկայացումով, որն այդ թվում պարունակում է տարեթիվ, ղեկավարի ստորագրություն, կազմակերպության կնիք և ներկայացուցչի անձնագրային տվյալներ: Լիազորագրի կնիքը պետք է արտաքին տեսքով և բովանդակությամբ համընկնի ապրանքատրանսպորտային փաստաթղթում ստացողի կնիքի հետ:

Վերոնշյալ պահանջները պահպանված լինելու ապացուցման բեռը դրվում է Ապահովադրի վրա:

5"1"2"2. Ապրանքն ուղեկցող փաստաթղթերի կորուստը Ապահովադրի կողմից (կամ Ապահովադրի մեղքով), բացառությամբ միջազգային ճանապարհային փոխադրման (TIR) գրքույկի:

ԲԱԺԻՆ 5.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՆՁԻ ԱՌՋԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ ՀԱՄԱՐ

5.2.1. Սույն բաժնի համաձայն՝ իրավասու անձի առջև Ապահովադրի պատասխանատվության ռիսկը կարող է ապահովագրվել ծախսերի հատուցման մասով, որոնք այդպիսի անձը կատարել է կամ պետք է կատարի՝ կապված բեռների փոխադրման, տրանսպորտային առաքման ծառայությունների ժամանակ Ապահովադրի պարտավորությունների խախտման հետ: Սույն կետով կարող են ապահովագրվել այդ թվում հետևյալ ռիսկերը.

5"2"1"1. Բեռի առաքման ուշացումը,

5"2"1"2. Բեռի առաքումն ուղարկողի հրահանգներին ոչ համապատասխան,

5"2"1"3. Սխալներ տրանսպորտային բեռնագրի և այլ ուղեկցող փաստաթղթերը լրացնելիս, բացառությամբ՝ բացառությամբ միջազգային ճանապարհային փոխադրման (TIR) գրքույկի:

ԲԱԺԻՆ 5.3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻՆ, ԿՅԱՆՔԻՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ԲԵՌՈՎ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

5.3.1. Սույն բաժնի համաձայն ապահովագրվում է Ապահովադրի պատասխանատվության ռիսկը՝ պատահականությունների և փոխադրման վտանգների արդյունքում երրորդ անձանց գույքին, կյանքին, առողջությանը բեռով/կոնտեյներով պատճառած վնասի (ցանկացած պատճառով, բացառությամբ Կանոնների 6-րդ բաժնում նշված դեպքերի) դեպքում, որոնք են՝

5"3"1"1. երրորդ անձանց գույքի վնասումը կամ ոչնչացումը,

5"3"1"2. երրորդ անձանց առողջությանը հասցված վնասը կամ մահը:

Ապահովագրական հատուցումը վճարվում է տուժածին (նրա ժառանգներին)՝ օրինական ուժի մեջ մտած դատական այնպիսի ակտի հիման վրա, որը պարունակում է հատուցման ենթակա գումարի հաշվարկը: Մահվան կամ առողջությանը հասցված վնասի հատուցման ծավալը և բնույթը որոշվում է այն երկրի օրենսդրության համաձայն, որտեղ հասցվել է վնասը:

5.3.2. Սույն բաժնի համաձայն երրորդ անձինք, հանդեպ ում պատասխանատվությունն ապահովագրված է, չեն համարվում այն անձինք, ովքեր Ապահովադրին ներկայացնում են բեռի փոխադրումից/առաքումից բխող պահանջներ:

ԲԱԺԻՆ 5.4. ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՌԱՔՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՏԵՅՆԵՐԻ ՏԻՐՈՋ ԱՌՋԵՎ՝ ԿԱՊՎԱԾ ԿՈՆՏԵՅՆԵՐԻ ԿՈՐՍՏԻ, ՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱՄ ՎՆԱՍՄԱՆ ՀԵՏ

5.4.1. Սույն բաժնի համաձայն՝ կարող է ապահովագրվել Ապահովադրի պատասխանատվության ռիսկը՝ կապված փոխադրման/առաքման համար ընդունված բեռով կամ առանց բեռի կոնտեյների փոխադրման ընթացքում դրա կորստի, ոչնչացվելու կամ վնասվելու հետ:

ԲԱԺԻՆ 5.5. ՄԱՔՍԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

5.5.1. Սույն բաժնի համաձայն՝ կարող է ապահովագրվել Ապահովադրի պատասխանատվության ռիսկը՝ կապված բեռների փոխադրման կամ տրանսպորտային առաքման ծառայություններ մատուցելիս չնախատեսված պատահական իրադարձության հետևանքով մաքսային օրենսդրությամբ սահմանված դեպքերում մաքսատուրքեր և տույժեր վճարելու պարտավորությունների առաջացման հետ:

Նշված ռիսկն ապահովագրված է հանդիսանում Ապահովադրի կողմից մաքսային օրենսդրության պահանջներին հետևելու պայմանով:

ԲԱԺԻՆ 5.6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

5.6.1. Սույն բաժնի համաձայն՝ ապահովագրված են համարվում Ապահովադրի բոլոր անհրաժեշտ և նպատակահարմար ծախսերը՝ կապված ապահովագրական պատահարից

կրած վնասների նվազեցման հետ. կախված ապահովագրված ռիսկից՝ դրանք կարող են լինել բեռի, կոնտեյների, երրորդ անձանց գույքի փրկման ծախսերը, ինչպես նաև պահանջի հետաքննության, նվազեցման, վիճարկման, այդ թվում՝ դատարանում իրավաբանական ներկայացուցչության ծախսերը:

5.6.2. Այլ անձանց (բեռների սեփականատիրոջ, առաքողի կամ փոխադրողի, որոնք չեն հանդիսանում Ապահովադիրներ և այլն) կողմից կատարված ծախսերը սույն կետի համաձայն հատուցվում են միայն այն դեպքում, եթե նրանց հատուցելու պարտականությունը դրված է Ապահովադրի վրա՝ օրենսդրությանը համապատասխան: Դատարանի կողմից այլ անձանց կողմից կրած կորուստների նվազեցման ծախսերը հատուցելու պատասխանատվությունն Ապահովադրի վրա դնելն ինքնին չի հանդիսանում Ապահովագրողի համար հիմք՝ սույն կետի համաձայն այդպիսի ծախսերը ապահովագրական ծածկույթին միացնելու և դրանք հատուցելու համար:

5.6.3. Կորուստների նվազեցման ծախսերը համարվում են ինքնաբերաբար ապահովագրված հիմնական ռիսկի հետ միասին, առանց Ապահովագրողից լրացուցիչ հավելավճար պահանջելու պայմանով:

ԲԱԺԻՆ 5.7. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐ

5.7.1. Սույն բաժնի համաձայն կարող են ապահովագրվել Ապահովադրի՝ ստորև նշված ծախսերի հատուցման ռիսկի առաջացումը՝

5"7"1"1. տրանսպորտային միջոցը ճանապարհային երթևեկելի մասից դուրս գալու կամ շրջվելու դեպքում տրանսպորտային միջոցի և նրանում փոխադրվող բեռի բարձրացնելը և դուրս բերելը,

5"7"1"2. տրանսպորտային միջոցի քարշակումը դեպի վերանորոգման մոտակա կետ, եթե հնարավոր չէ դրա ինքնուրույն տեղաշարժը՝ Կանոնների 5.7.1.1 ենթակետում նշված վնասի պատճառման դեպքում,

5"7"1"3. Ապահովադրի ծախսերի ռիսկը կապված է վերջինիս պարտավորության հետ՝ հեռացնելու, ոչնչացնելու, լուսաբանելու տրանսպորտային պատահարից հետո բեռի մնացորդները, եթե դա նախատեսված է այն երկրի օրենսդրությամբ, որտեղ տեղի է ունեցել տրանսպորտային պատահարը,

5"7"1"4. Վնասված բեռի ոչնչացման ծախսերը,

5"7"1"5. Այլ ծախսերը, որոնք առաջանում են փոխադրում և առաքում իրականացնելու Ապահովադրի գործունեության հետ:

ԲԱԺԻՆ 6. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻՑ

6.1" Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցումը և ապահովագրական գումարը վճարելուց, եթե ապահովագրական պատահարն առաջացել է հետևյալ պատճառներով՝

6.1.1. Ցանկացած տեսակի ռազմական գործողություններ կամ ռազմական միջոցառումներ և դրանց հետևանքներ, քաղաքացիական պատերազմ, ժողովրդական հուզումներ և գործադուլներ, զինվորական կամ քաղաքացիական իշխանությունների պահանջով բեռների բռնագրավումներ, ձերբակալություններ կամ ոչնչացում,

6.1.2. Միջուկային պայթյուն, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կամ անուղղակի ազդեցություն՝ կապված միջուկային էներգիայի կամ ռադիոակտիվ նյութերի ցանկացած կիրառման հետ,

6.1.3. Ապահովադրի դիտավորությամբ կատարված գործողությունների/անգործության հետևանքով ապահովագրական պատահարի տեղի ունենալ:

Ապահովադրի դիտավորություն է համարվում նաև Ապահովադրի անունից գործող ֆիզիկական անձանց, ղեկավարների, Ապահովադրի աշխատակիցների, լիազորված ներկայացուցիչների (բացառությամբ Ապահովադրի ենթաառաքողների աշխատակիցների, որոնք գործում են Ապահովադրի կողմից տրված լիազորագրի հիման վրա, դիտավորյալ գործողությունները (անգործությունը): Կանոնների շրջանակներում անձը ճանաչվում է դիտավորյալ գործող, եթե նա կանխատեսել է կամ ողջամիտ պայմաններում կարող էր կանխատեսել ապահովագրական պատահար տեղի ունենալը՝ որպես իր վարքագծի հետևանք, և ցանկացել կամ գիտակցաբար թույլ է տվել պատահարի տեղի ունենալը կամ անտարբեր է վերաբերվել դրան:

6.2" Ապահովագրական պատահար չի համարվում նաև Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվության ի հայտ գալը հետևյալ պայմաններում՝

6.2.1. Վնասը պատճառվել է համակարգչային սարքավորումների, համակարգչային համակարգերի, համակարգչային ծրագրերի ապահովման, վնասակար ծրագրային կոդերի, համակարգչային վիրուսների և ցանկացած այլ էլեկտրոնային համակարգերի կիրառման միջոցով,

6.2.2. Վնասի հատուցման պահանջն առաջացել է այնպիսի պատահարի արդյունքում, որը տեղի է ունեցել Ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրության տարածքից դուրս,

6.2.3. Վնասը պատճառվել է Ապահովադրի աշխատակիցների կողմից այն պարտադիր կանոնների և նորմերի խախտման հետևանքով, որոնք վերաբերում են բեռի փոխադրմանը, տրանսպորտային առաքման ծառայությունների կամ փոստային ծառայությունների մատուցմանը, բեռն ուղարկողի հրահանգներին և (կամ) Ապահովագրողի գրավոր հրահանգներին չհետևելու պատճառով, եթե Ապահովադիրը չապացուցի, որ նշված կանոններին և նորմերին, հրահանգներին հետևելու հնարավորությունը բացակայել է, և ձեռնարկվել են դրանց հետևելու հետ կապված բոլոր միջոցառումները,

6.2.4. Վնասը պատճառվել է տեխնիկապես թերի տրանսպորտային միջոցի/կոնտեյների, սահմանված կարգով տեխնիկական զննում չանցած, կոնկրետ ապրանքի տեսակ փոխադրելու համար ոչ պիտանի կամ ապրանքի անվտանգ փոխադրումը չապահովող տրանսպորտային միջոցի շահագործման պայմաններում կամ հետևանքով,

6.2.5. Պատահար տեղի ունենալու պահին ալկոհոլի, թմրանյութերի կամ թունավոր նյութերի ազդեցության տակ Ապահովադրի, Շահառուի ներկայացուցչի գտնվելը,

6.2.6. Ապահովադրի ներկայացուցչի կողմից ալկոհոլի, թմրանյութերի կամ թունավոր նյութերի ազդեցության տակ տրանսպորտային միջոցը կառավարելիս ճանապարհային երթևեկության կանոնների խախտումը,

6.2.7. Հատուկ ջերմաստիճանային պայմաններ պահանջող ապրանքների փոխադրումը, հետևյալ պայմանների խախտմամբ՝

Տրանսպորտային միջոցները, որոնց օգնությամբ իրականացվում է սառնարանային ռեժիմ պահանջող ապրանքների փոխադրումը, պետք է հագեցած լինեն սառնարանի ներսում

ջերմաստիճանի հսկողության և ձայնագրման սարքերով (data loggers)՝ փոխադրման ողջ ընթացքում: Շուտ փչացող ապրանքի ընդունումը պետք է կատարվի փոխադրման ջերմաստիճանում: Օգտագործվող հավասարաչափական/սառնարանային կցորդները/կիսակցորդները չպետք է լինեն ավելի քան 10 տարի արտադրության:

Եթե սառնարանային սարքը զննելիս չի հայտնաբերվել դրա անսարքությունը կամ թերությունը, ապա այդ սարքում ջերմաստիճանային ռեժիմի խախտումից առաջացած վնասները հատուցվում են Ապահովագրողի կողմից, եթե Ապահովադիրն ապացուցի, որ ջերմաստիճանի խախտման պատճառը եղել է պատահական, Ապահովադրի կողմից անկանխատեսելի հանգամանքը:

6.2.8. Ապահովադրի աշխատակիցների կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառած վնասի հատուցման պահանջներ,

6.2.9. Պետական մարմինների ներկայացուցիչների գործողությունները (բեռի բռնագրավում, ձերբակալում, առգրավում, կալանք և այլն), բացառությամբ՝ Ապահովագրության պայմանագրով սահմանված դեպքերի,

6.2.10. Գործող պայմաններին կամ անվտանգության նորմերին համապատասխան՝ մաքսանենգ կամ բեռների փոխադրումը/առաքումն այն տեսակի տրանսպորտով, որոնցով դրանց փոխադրումն արգելված է: Բեռը համարվում է մաքսանենգ, եթե մաքսային սահմանով դրա անօրինական փոխադրման փաստը հաստատված է իրավասու մարմինների կողմից,

6.2.11. Բարոյական վնասի, բաց թողած օգուտի հատուցման պահանջներ,

6.2.12. Օրենսդրությամբ և/կամ Ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

6.3" Եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրությամբ չեն ծածկվում հետևյալ ռիսկերը՝

6.3.1. Անծածկ տրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով առաջացած պատասխանատվությունը,

6.3.2. Տուժանքների վճարման պահանջներ,

6.3.3. Շուկայական արժեքի կորստի հատուցման պահանջներ,

6.3.4. Ապահովադրի կողմից ապահովագրության դիմումի ստանդարտ ձևաթղթում, Ապահովագրության պայմանագրում չնշված և ապահովագրավճարի հաշվարկման ժամանակ հաշվի չառնված բեռի գծով պատասխանատվությունը,

6.3.5. Բեռի փոխադրման պատասխանատվությունն այնպիսի տրանսպորտային միջոցներով, որոնք նշված չեն Ապահովագրության պայմանագրում,

6.3.6. Ապահովագրության պայմանագրում նշված բեռի տեղափոխման երթուղու կամ ժամկետների խախտմամբ տեղի ունեցած պատահարները,

6.3.7. Ստորև նշված արժեքավոր ապրանքների փոխադրման համար պատասխանատվությունը՝

ա) թանկարժեք մետաղների ձուլակտորներ և դրանցից պատրաստված իրեր,

բ) թանկարժեք քարեր և ոսկերչական իրեր,

գ) թղթադրամներ և մետաղադրամներ,

դ) պարտատոմսեր, վճարման միջոցներ և այլ տեսակի արժեթղթեր,

ե) արվեստի գործեր,

զ) ազնվացեղ կենդանիներ:

6.3.8. Պահանջները, որոնք բխում են բեռների միջազգային փոխադրման պայմանագրից, որը պահանջում է Ապահովադրից ընդունելու ապրանքի վնասման կամ կորստի համար պատասխանատվությունն առանց սահմանափակումների՝ նախատեսված միջազգային պայմանագրերով և կոնվենցիաներով կամ ազգային տրանսպորտային օրենսդրությամբ, կամ սահմանում է այլ լրացուցիչ պատասխանատվություն:

6.3.9. Որևէ գույքի կորուստը կամ վնասը, որը պատկանում է, ձեռքբերված է լիզինգով կամ վարձակալված է Ապահովադրի կողմից, այդ թվում՝ շենքերը/շինությունները կամ վարձակալած կոնտեյներները,

6.3.10. Ապահովադրին պատկանող, նրա կողմից վարձակալված կամ Ապահովադրի կամ նրա աշխատակիցների կողմից հանրային ճանապարհների վրա շահագործվող ցանկացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման արդյունքում, եթե Ապահովագրության պայմանագրով փոխադրողի պատասխանատվությունն ապահովագրված չէ:

6.3.11. Ցանկացած նավի կամ օդանավի օգտագործման արդյունքում, որը պատկանում է կամ վարձակալված է Ապահովադրի կողմից կամ նրա անունից:

6.3.12. Պարտականությունների կատարման փոխանցումը Ենթաառաքողին, որի պատասխանատվությունը բեռը ոչնչացնելու, կորստից կամ վնասելուց ապահովագրված չէ, եթե ենթակապալառուի մոտ այդպիսի ապահովագրության առկայությունը նախատեսված է Պայմաններով կամ Ապահովագրության պայմանագրով:

6.3.13. Փոխադրողի/նավավարձակալի կողմից ապրանքի պահումը կապված Ապահովադրի կամ նրա ենթակապալառուի կողմից վարձը վճարելու, ուշացումների հատուցելու և այլ պարտականությունների չկատարելու հետ, որոնք բխում են փոխադրման պայմանագրից:

6.3.14. Վնասված բեռի լրիվ արժեքը հատուցելու պահանջները, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնարինության կամ աննպատակահարմարության պատճառով վնասված բեռը ենթակա չէ վերականգնման:

6.3.15. Բեռների առաքումը կամ փոխադրումը, որոնց երթուղին նախատեսում է բեռների փոխադրումը ռազմական գործողությունների, բնական աղետների և արտակարգ իրավիճակների գոտիների (զինված հակամարտությունների) տարածքով:

Ապահովադիրը ապահովագրության պայմանագրով կարող է նշել կոնկրետ պետություններ/տարածքներ, որոնք անբարենպաստ իրադրության պատճառով գտնվում են ապահովագրական ծածկույթից դուրս. այս դեպքում ապահովագրությունը չի տարածվում՝

1) նշված տարածքներով բեռի փոխադրման վրա,

2) նշված տարածքներում գրանցված տրանսպորտային միջոցներով իրականացվող փոխադրման վրա,

3) ենթակապալառուների իրականացրած փոխադրումների վրա, ովքեր համարվում են նշված պետության ռեզիդենտներ կամ գրանցված են, կամ էլ ունեն մշտական բնակություն ծածկույթը բացառող տարածքներում:

6.3.16. Ապահովադրին ներկայացվող պահանջներ, որոնց հայցային վաղեմության ժամկետը արդեն լրացել է:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

7.1" Ապահովագրական գումար է համարվում Ապահովագրության պայմանագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ սահմանված գումարի չափը, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի դեպքում վճարել ապահովագրական հատուցում:

7.2" Ապահովագրության պայմանագրով կարող են նշվել մեկ ապահովագրական պատահարով հատուցման ենթակա առավելագույն չափեր՝ ապահովագրական գումարի ենթաչափեր: Ընդ որում, եթե այդպիսի դեպքերում մեկ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացել են մեկից ավելի վնասներ, ապա դրանք միավորվում և դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահարի հետևանք: Եթե Ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի ենթաչափը չի բավարարում մեկ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած մի քանի վնասների հատուցման համար, ապա Ապահովագրողը ապահովագրական հատուցումը յուրաքանչյուր վնասի գծով իրականացնում է վնասի մի մասի չափով՝ ընդհանուր վնասների մեջ տվյալ վնասի համամասնությամբ՝ մասհանելով նաև Ապահովագրության պայմանագրում սահմանված չհատուցվող գումարի չափը: Պայմանագրի կնքման ժամանակ ապահովագրական գումարի ենթաչափերը որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և կարող են սահմանվել ինչպես առանձին ռիսկերի նկատմամբ (սահմանափակում ըստ ռիսկի), այնպես էլ մեկ բեռնափոխադրման կամ տրանսպորտային առաքման ծառայությունների (համախառն սահմանափակում) մատուցման մեկ դիմումի արդյունքում առաջացած բոլոր ապահովագրական պատահարների պատասխանատվության սահմանափակում:

7.3" Յուրաքանչյուր ապահովագրական հատուցման վճարումից հետո ապահովագրական գումարը նվազում է վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով: Ապահովագրության պայմանագիրը դադարում է գործել, եթե ընդհանուր սահմանաչափը սպառված է:

7.4" Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը Ապահովագրողի կողմից իրականացված ապահովագրական հատուցմամբ պայմանավորված նվազման դեպքում կարող է Ապահովադրի ցանկությամբ վերականգնվել կամ լրացվել՝ լրացուցիչ ապահովագրավճարի մուծմամբ: Լրացուցիչ ապահովագրավճարի մեծությունը սահմանվում է Ապահովագրողի կողմից:

7.5" Ապահովագրության պայմանագրում կարող է նախատեսվել չհատուցվող գումարը՝ կորուստների հատուցման մեջ Ապահովադրի սեփական մասնակցության բաժինը: Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական: Եթե ապահովագրության պայմանագրում չի նշվում, թե ինչպիսի չհատուցվող գումար է կիրառվում, ըստ կանխադրման օգտագործվում է ոչ պայմանական չհատուցվող գումար:

7.6" Ապահովագրական հատուցման գումարը մի քանի ռիսկերով հաշվարկելիս՝ չհատուցվող գումարը հանվում է յուրաքանչյուր ռիսկից: Եթե ապահովագրության պայմանագրով նախատեսված են տարբերակված չափի չհատուցվող գումար մեկ ապահովագրության ռիսկով՝ կախված փոխադրվող բեռի տեսակից, ապահովագրական

պատահարի պատճառներից և այլն (փոխծածկվող չհատուցվող գումարը), ապա կիրառվում է այն չհատուցվող գումարի չափը, որն ամենամեծն է:

7.7" Եթե Ապահովագրության պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, չհատուցվող գումարի արժույթի վերահաշվարկումն իրականացվում է ապահովագրական հատուցման վճարման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված փոխարժեքով:

7.8" Ապահովագրողն ապահովագրավճարը հաշվարկում է՝ ելնելով բազային սակագնի չափից, ապահովագրական ռիսկի բնույթից, ապահովագրավճարի չափից, Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետից, ապահովագրական ռիսկի աստիճանից, որոնցից կախված կիրառվում են ուղղման գործակիցներ:

Ապահովագրողն ապահովագրական ռիսկի բնույթը որոշում է Ապահովագրության պայմանագիրը կնքելիս Ապահովադրի տրամադրած տեղեկատվության հիման վրա:

7.9" Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել միանվագ՝ ամբողջ Ապահովագրության ժամկետի համար կամ պարբերաբար (մաս-մաս): Վճարման կարգը սահմանվում է Ապահովագրության պայմանագրով:

7.10" Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով Ապահովագրողի դրամարկղ կամ ներկայացուցչին, իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի կամ ապահովագրական գործակալի համապատասխան հաշվարկային հաշվին:

7.11" Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Ապահովագրության պայմանագրով:

7.12" Եթե Ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Ապահովագրության պայմանագիրը, եթե պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:

7.13" Եթե Ապահովադիրն Ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (լրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Ապահովագրության պայմանագիրը՝ առանց այդ մասին Ապահովադրին ծանուցելու:

7.14" Եթե մինչև Ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետի հաջորդ օրը հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվել կամ վճարվել է Պայմանագրով նախատեսվածից փոքր չափով, ապա Ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Ապահովագրության պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված օրվան հաջորդող 00 ժամ 00 րոպեից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի 24 ժամ 00 րոպեն:

ԲԱԺԻՆ 8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1" Ապահովադիրը պարտավոր է.

8.1.1" Ապահովագրողին անմիջապես հաղորդել ապահովագրական ռիսկի բոլոր էական փոփոխությունների մասին: Տվյալ դեպքում էական են համարվում այն հանգամանքները, որոնք կարող են ազդել Ապահովագրողի՝ ապահովագրական ռիսկն ընդունելու կամ ապահովագրավճարի չափի սահմանելու մասին որոշման վրա: Այդպիսի հանգամանքների թվին մասնավորապես դասվում են Ապահովագրողի ապահովագրության դիմումի ստանդարտ ձևաթղթում նշված տեղեկությունները, ինչպես նաև տեղեկությունները, որոնք նշված չեն դիմումի ստանդարտ ձևաթղթում, սակայն պահանջվել են Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագիրը կնքելիս, և Կանոններով նախատեսված այլ տեղեկությունները:

8.1.2" Ժամանակին վճարել ապահովագրավճարը՝ Ապահովագրության պայմանագրով սահմանված չափերով և կարգով:

8.1.3" Անհապաղ, սակայն ցանկացած դեպքում ոչ ուշ, քան 3 օրում, այն պահից, երբ Ապահովադիրն իմացել է իրադարձության մասին, որն ունի ապահովագրական պատահարի հատկանիշներ, այդ մասին գրավոր ձևով (էլեկտրոնային կամ այլ միջոցով) ծանուցել Ապահովագրողին:

8.1.4" Անհապաղ Ապահովագրողին տրամադրել ողջ հասանելի տեղեկատվությունը և փաստաթղթերը, որոնք Ապահովագրողին թույլ են տալիս դատել ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության պատճառների, ընթացքի և պատահարի հետևանքների մասին, միջոցներ ձեռնարկել ապահովագրական պատահարի հանգամանքների հետաքննության և վնասների նվազեցման համար, ինչպես նաև սուբրոգացիոն պահանջներ ներկայացնելու այն անձին, ով պատասխանատու է պատճառված վնասի համար:

8.1.5" Ապահովագրական պատահարի կամ դրա հատկանիշներ ունեցող իրադարձության ժամանակ Ապահովագրողի պահանջով վերջինիս նշած անձին հանձնել պատշաճ կերպով ձևակերպված լիազորագիր՝ ապահովագրական պատահարի հետ կապված խնդիրների լուծման ընթացքում Ապահովադրի շահերը ներկայացնելու համար:

8.1.6" Չզիջել Ապահովագրության պայմանագրից ծագած իրավունքներն առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության:

8.1.7" Առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության ուղղակի կամ անուղղակի կերպով չճանաչել որևէ անձի պահանջների հիմնավորվածությունը կամ այդ անձի առջև պատասխանատվությունը:

8.1.8" Կատարել Ապահովագրության պայմանագրի պայմանները, Կանոնների պահանջները, ինչպես նաև Ապահովագրողի գրավոր ցուցումները, ներառյալ՝ պետական մարմինների գործողությունների, ինչպես նաև որոշումների բողոքարկման դատական պաշտպանության հրահանգները:

8.2" Ապահովադիրն իրավունք ունի՝

8.2.1" Ապահովագրողից պահանջելու Ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարում՝ պայմանագրի պայմաններին համապատասխան,

8.2.2" Ապահովագրողից պահանջելու Կանոնների, դրանց առանձին դրույթների, ապահովագրության պայմանագրի հավելվածների և հրահանգների պարզաբանում,

8.2.3" Ստանալու ապահովագրության պայմանագրի կրկնօրինակը՝ այն կորցնելու դեպքում,

8.2.4" Ստանալու ապահովագրական հատուցում այնպիսի դեպքերում, որոնք նախատեսված են Ապահովագրության պայմանագրով և Կանոններով:

8.3" Ապահովագրողը պարտավոր է՝

8.3.1" Ապահովագրության պայմանագիրը կնքելուց հետո Ապահովադրին սահմանված ժամկետում տալ Ապահովագրության պայմանագիրը,

8.3.2" Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում վճարել ապահովագրական հատուցում,

8.3.3" Հատուցել ծախսերը, որոնք Ապահովադրի կողմից Կանոններին և Ապահովագրության պայմանագրին համապատասխան կատարվել են ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած վնասները նվազեցնելու նպատակով,

8.3.4" Չբացահայտել Ապահովագրողից ստացված գաղտնի տեղեկատվությունը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

8.4" Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցում վճարելը, այդ թվում, եթե Ապահովադիրը,

ա) ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովադիրն ապահովագրության օբյեկտի վերաբերյալ ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ թաքցրել է դրանք,

բ) չի տեղեկացրել Ապահովագրողին ռիսկի էական փոփոխությունների մասին,

գ) միջոցներ չի ձեռնարկել ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած վնասները նվազեցնելու և բեռը փրկելու համար,

դ) տասնօրյա ժամկետում Ապահովագրողին չի տեղեկացրել այն դեպքի մասին, որը կարող է ի հայտ գալ բերել ապահովագրական պատահար,

ե) Ապահովագրության պայմանագրով կամ Կանոններով սահմանված ժամկետում չի տեղեկացրել Ապահովագրողին ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին,

զ) չի կատարել Կանոններով, Ապահովագրության պայմանագրով, դրան կից հավելվածներով և հրահանգներով նախատեսված պարտականությունները, ինչպես նաև Ապահովագրողի գրավոր ցուցումները:

8.5" Ապահովագրողն իրավունք ունի իրականացնել Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

8.6" Ապահովագրության պայմանագիրը կնքելիս և (կամ) ապահովագրության վկայագրում պարունակվող Ապահովադրի կողմից տրամադրված տեղեկություններն Ապահովագրողն իրավունք ունի հաղորդելու այն անձանց, որոնց հետ Ապահովագրողը մտադրություն ունի կնքելու վերաապահովագրության պայմանագիր:

8.7" Ապահովադրի և Ապահովագրողի միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությանը, Կանոններին և Ապահովագրության պայմանագրին համապատասխան:

ԲԱԺԻՆ 9. ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

9.1" Ապահովագրական պատահարի դեպքում Ապահովադիրը պարտավոր է.

9.1.1" միջոցներ ձեռնարկել ապահովագրական պատահարից առաջացած վնասների նվազեցման համար,

9.1.2" անմիջապես, սակայն ցանկացած դեպքում երեք օրից ոչ ուշ, այն պահից, երբ նա իմացել կամ պարտավոր էր իմանալ ապահովագրական պատահարի հատկանիշներ պարունակող իրադարձության տեղի ունենալու մասին, գրավոր ձևով Ապահովագրողին ծանուցել տեղի ունեցածի մասին և Ապահովագրողի պահանջով նրան տրամադրել անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները տեղի ունեցածի հանգամանքները պարզելու համար,

9.1.3" պահանջը ստանալիս Ապահովադիրը պարտավոր է պահանջը ստանալու պահից ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում այն փոխանցել Ապահովագրողին՝ ունեցած պահանջային փաստաթղթերի (պահանջին կցված փաստաթղթերը, և փաստաթղթերը, որոնք գտնվում են Ապահովադրի մոտ) հետ միասին, իսկ անհրաժեշտության դեպքում ձեռնարկել գործողություններ պահանջի կարգավորման համար,

9.1.4" Ապահովագրողին ուղարկել այն փաստաթղթերը և տեղեկությունները, որոնք թույլ կտան Ապահովագրողին որոշելու, թե ըստ Ապահովագրության պայմանագրի՝ տեղի ունեցածը հանդիսանում է արդյոք ապահովագրական պատահար, սահմանելու պատճառված վնասի և ապահովագրական հատուցման չափը, իսկ անհրաժեշտության դեպքում ձեռնարկել գործողություններ պահանջի կարգավորման համար: Այդպիսի փաստաթղթերի թվին են պատկանում մասնավորապես՝

9.1"4.1" Ապահովադրին ներկայացված պահանջը՝ դրան կցված փաստաթղթերով և նյութերով (հայցադիմումը, որով Ապահովադիրը հանդիսանում է պատասխանող, դատական ակտը, որով Ապահովադիրը պարտավորեցվել է հատուցել երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը). եթե պահանջը ներկայացված է ոչ իրավասու անձի կողմից (օրինակ՝ առաքողի, որը փոխադրման պայմանագրով չի հանդիսանում բեռի սեփականատերը, ուղարկողը կամ ստացողը), Ապահովագրողին պետք է փոխանցվեն այն փաստաթղթերը, որոնք հաստատում են պահանջ ներկայացնողի այդպիսի իրավունքը (բեռների սեփականատերերի կողմից նրան հասցեագրված պահանջները, փաստաթղթերը, որոնք հաստատում են բեռի սեփականատիրոջ վնասի հատուցումը և այլն):

9.1"4.2" Փոխադրման և առաքման համար բեռի ընդունումը հաստատող փաստաթղթերը:

Փոխադրման համար բեռի ընդունումը հաստատող փաստաթղթերն են՝ տրանսպորտային բեռնագրերը, նավաբեռնագիրը (կախված տրանսպորտի տեսակից), ուղեբեռի կտրոնը: Առաքման համար բեռի ընդունումը հաստատող փաստաթղթերն են՝ առաքման բեռնագրերը, ՖԻԱՏԱ-ի, առաքողի բեռի ստացականը (FCR), այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են տրանսպորտային առաքման պայմանագրով կամ առևտրային գործունեության սովորական պայմաններով: Միջազգային բեռնափոխադրման ժամանակ փաստաթղթերը պետք է պարունակեն մաքսային մարմինների նշումները,

9.1"4.3" Փոխադրման/առաքման պայմանագիր, դիմում, ճանապարհային ուղեգիր, փոխադրման վճարման մասին տեղեկություններ,

9.1"4.4" Բեռի փաստաթղթերը (հաշիվները, հաշիվ-ապրանքագրերը, փաթեթավորման փաստաթուղթ, ապրանքային բեռնագրերը),

9.1"4.5" Տեղի ունեցածի հանգամանքների մասին բացատրությունները (փոխադրման դեպքում՝ վարորդի բացատրությունները):

9.1"4.6" Հսկողության սարքերի տվյալները և ջերմաստիճանային ռեժիմի գրանցումները, սառնարանային փոխադրման դեպքում՝ տախոգրաֆի գրառումների ցուցումները (միջազգային փոխադրումների դեպքում),

9.1"4.7" Իրավասու մարմինների կողմից ձևակերպված փաստաթղթերը, որոնք հաստատում են իրադարձության փաստը և մեղավոր անձանց՝

ա) Ճանապարհատրանսպորտային պատահարի (ՃՏՊ) դեպքում՝ ՃՏՊ սխեման, մասնակիցների վերաբերյալ տեղեկությունները, վարչական կամ քրեական գործի մասին որոշումը,

բ) հրդեհի դեպքում՝ ակտ հրդեհի մասին, հրդեհի պատճառի մասին եզրակացություն (փորձագետի տեղեկանք), քրեական գործի հարուցման կամ հարուցումը մերժելու մասին որոշում,

գ) կորստի, միջազգային փոխադրումների ժամանակ բեռի վնասման դեպքում՝ մաքսային զննության ակտ, միջազգային ճանապարհային փոխադրման (TIR) գրքույկի վթարային արձանագրություն, վարչական գործի մասին որոշում,

դ) բեռի հափշտակության դեպքում՝ իրավապահ մարմիններին հաղորդելու հաստատում, քրեական գործի հարուցման մասին (հարուցման մերժման) որոշում, հետաքննության արդյունքներ,

9.2" Ներկայացված պահանջների նախնական քննարկումն իրականացվում է անհրաժեշտ փաստաթղթերի պատճենների հիման վրա՝ Ապահովադրին ուղղված պահանջի բնօրինակի և փաստաթղթերի վավերացված պատճենների պարտադիր ներկայացման պայմանով: Եթե գործում առկա փաստաթղթերի պատճեներում կամ այլ գրավոր ապացույցների միջև կան անհամապատասխանություններ և հնարավոր չէ պարզել սկզբնաղբյուրի իրական բովանդակությունն այլ ապացույցների օգնությամբ, ինչպես նաև այն դեպքում, եթե հիմնավորումների բացակայությունը հանգեցնում է սուբրոգացիայի անհնարինությանը, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել ներկայացնելու փաստաթղթերի բնօրինակները:

Ապահովագրողի պահանջով Ապահովադիրը պետք է ապացուցի բնօրինակ փաստաթղթերի ներկայացման անհնարինությունը:

9.3" Կանոնների 9.1.4.7 կետում նշված փաստաթղթերը պետք է տրամադրվեն Ապահովագրողին Ապահովադրի կողմից դրանք ստանալու օրվանից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում:

9.4" Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են իրադարձությունն իբրև ապահովագրական պատահար գնահատելու համար, և նշել այդ փաստաթղթերի ներկայացման ժամկետը: Ապահովագրողին լրացուցիչ պահանջված փաստաթղթերի և տվյալների ներկայացման անհնարինության դեպքում Ապահովադիրը պարտավոր է գրավոր ծանուցել Ապահովագրողին այդ մասին և նշել պատճառները, որոնք խոչընդոտել են փաստաթղթերի ներկայացնելուն:

ԲԱԺԻՆ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ

10.1" Ապահովադրին պահանջներ ներկայացնելիս՝ Ապահովագրողն իրավունք ունի միջոցներ ձեռնարկել Ապահովադրի շահերն արտադատական և դատական կարգով պաշտպանելու համար: Ապահովադրի շահերի պաշտպանությանն ուղղված

գործողությունների իրականացումը չի նշանակում, որ Ապահովագրողն ընդունում է իր պատասխանատվությունը, և չի կարող մեկնաբանվել որպես Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցում վճարելու պարտականության ճանաչման հիմք:

10.2" Ապահովագրողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու ապահովագրական հատուցումը վճարելուց՝

10.2.1" Ապահովագրողի առաջարկած արտադատական և դատական կարգով պաշտպանությունից Ապահովադրի հրաժարվելու դեպքում, կամ

10.2.2" Ապահովադրի կողմից Ապահովագրողի արտադատական և դատական կարգով պաշտպանության հրահանգների ոչ պատշաճ կատարելու դեպքերում, կամ

10.2.3" Ապահովագրողին հայցադիմումների, դատավարական փաստաթղթերի (որոշումների, վճիռների և այլն), իրավասու մարմինների որոշումների (քրեական, վարչական գործի հարուցման մասին, վարչական տույժերի նշանակման մասին և այլն) անմիջապես կամ ստացման պահից 3 օրյա ժամկետում կամ այն պահից, երբ Ապահովադիրն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդ մասին, չներկայացնելը, եթե Ապահովագրողի չծանուցելը կամ ուշ ծանուցելը ազդել է բողոքարկման, դատական նիստին մասնակցելու հնարավորության վրա, կամ այլ կերպ խոչընդոտել է Ապահովագրողի կողմից հանգամանքների պարզելուն կամ ապահովագրական պատահարից առաջացած կորուստների նվազեցմանն ուղղված գործողությունների կատարելուն:

10.3" Եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրական հատուցումը վճարվում է՝ իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու և, ըստ Կանոնների, Ապահովադրի պարտավորությունների կատարման պայմանով: Ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովադրին՝ հասցված վնասի՝ իր կողմից հատուցումը հաստատող փաստաթղթերը ներկայացնելուց հետո: Ապահովադրի դիմումի հիման վրա՝ Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը կարող է վճարվել անմիջականորեն Շահառուին:

ՀՀ ռեզիդենտ հանդիսացող Ապահովադրին կամ Շահառուին ապահովագրական հատուցում վճարելը կատարվում է արտարժույթի գումարային կորստին համարժեք ՀՀ դրամով: Եթե ապահովագրության պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, ապա արտարժույթի փոխարկումը ՀՀ դրամի իրականցվում է ապահովագրական հատուցումը վճարելու օրվա ՀՀ ԿԲ–ի պաշտոնական փոխարժեքով:

10.4" Վնասների կառուցվածքը.

10.4.1" ԸՍՏ ԲԵՌԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԵՎ ՎՆԱՍՄԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՆՁԻ ԱՌՋԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ.

10.4"1.1" Իրավասու անձին պատճառված վնասի չափով.

- բեռի արժեքը դրա ընդհանուր ոչնչացման կամ կորստի դեպքում,

- Արժեքի նվազեցման կամ վնասի վերականգնման ծախսերի գումարները՝ բեռի վնասման դեպքում: Արժեքի նվազեցման գումարը որոշվում է փորձագետի եզրակացության հիման վրա: Վնասի վերականգնման ծախսերը ներառում են.

ա) աշխատանքների արժեքը,

բ) դետալների և պահեստային մասերի արժեքը՝ հաշվի առնելով դրանց մաշվածությունը,

գ) վնասված բեռը վերանորոգման կետ փոխադրելու կամ դետալների և պահուստային մասերի տրանսպորտային ծախսերը և մաքսային վճարները, որոնք ի սկզբանե ներառված չեն եղել բեռի արժեքում:

Բեռի արժեքը որոշվում է միջազգային և ազգային տրանսպորտային օրենսդրության կանոնների և սահմանափակումների համաձայն, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

10.4"1.2" Փոխադրման հետ կապված տրանսպորտային ծախսերը, մաքսային վճարները և այլ ծախսերը, որոնց հատուցումը դրված է Ապահովադրի վրա՝ օրենսդրությանը համապատասխան, լրիվ հատուցվում են ամբողջ ապրանքի կորստի դեպքում կամ մասնակի կորստի դեպքում վնասի չափին համամասնորեն:

Մաքսային վճարները ներառում են՝ մաքսատուրքերը, մաքսային և հարկային ձևակերպման գանձումները:

Հատուկ վերապահում. եթե բեռի կամ դրա մի մասի կորուստը տեղի է ունեցել մինչև մաքսային հայտարարագրի ներկայացումը, ապա հայտատուի կողմից դրա արդյունքում տվյալ բեռի նկատմամբ վճարված մաքսային վճարները հատուցման ենթակա չեն:

Չեն հատուցվում նաև տույժերը կապված մաքսային վճարներն ուշացնելու հետ, որոնց վճարներից հայտատուն ազատվում է օրենսդրությանը համապատասխան (բեռի կորուստը վթարի հետևանքով, անհաղթահարելի ուժի, բնական վնասի կամ մաշվածության և այլն):

10.4"1.3" Եթե բեռի կորստի կամ ոչնչացման հետ կապված ապահովագրական հատուցումը ստանալու ժամանակ կամ դրանից հետո այդ բեռը գտնվի կամ պարզվի, որ բեռը ոչնչացած չէ, Ապահովագրողը կարող է պահանջել, որպեսզի Ապահովադիրը կամ Շահառուն (կախված այն բանից, թե ում է փոխանցվել ապահովագրական հատուցումը) վերադարձնի ապահովագրական հատուցումը՝ հանելով դրա այն մասը, որը համապատասխանում է Ապահովադրին կամ Շահառուին պատճառված իրական վնասին:

10.4.2" ԸՍՏ ԻՐԱՎԱՍՈՒ ԱՆՁԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ.

10.4"2.1" Բեռի առաքման ուշացումը՝

Հատուցվում են միայն իրավասու անձի՝ փաստաթղթերով հաստատված վնասները, այն չափով, որը չի գերազանցում փոխադրման վճարները:

10.4"2.2" Բեռի առաքումը՝ ուղարկողի հրահանգներին անհամապատասխան՝

Հատուցվում են ապահովագրության պայմանագրով նախատեսված պատասխանատվության սահմանների շրջանակներում իրավասու անձի վնասները, որոնք առաջացել են Ապահովադրի կողմից ուղարկողի հրահանգներին չհետևելու արդյունքում, եթե այդպիսի ծախսերն այդ անձը չէր կրի, եթե Ապահովադրի կողմից ուղարկողի հրահանգները լինեին պատշաճ կատարված՝

ա) բեռի պահպանման ժամանակ,

բ) բեռի փոխադրման ժամանակ,

գ) մաքսային վճարները վճարելու ժամանակ (եթե դրանց վճարումը պայմանավորված է եղել օրենսդրության պահանջով, և մաքսային վճարները հետագայում վճարողին վերադարձնելու ենթակա չեն):

10.4"2.3" Տրանսպորտային բեռնագիրը և բեռն ուղեկցող այլ փաստաթղթերը լրացնելուց թույլ տրված սխալները, բացառությամբ միջազգային ճանապարհային փոխադրման (TIR) գրքույկի:

Ապահովագրության պայմանագրով սահմանված պատասխանատվության սահմանաչափի շրջանակներում հատուցվում են իրավասու անձի՝ բեռի փոխադրման և պահպանման պատճառով առաջացած վնասները, մաքսային վճարները, որոնք առաջացել են Ապահովադրի կողմից ապրանքատրանսպորտային փաստաթղթերը սխալ լրացնելու հետևանքով, այն դեպքում, եթե փաստաթղթերը ճիշտ ձևակերպելիս այդպիսի ծախսեր չէին առաջանա:

Հատուցման ենթակա չեն անուղղակի վնասները՝ գործուղման ծախսերը, հյուրանոցային ծախսերը, մասնագետների փոխադրումը և այլն:

10.4.3" ԸՍՏ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻՆ ԲԵՌՈՎ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ.

10.4"3.1" Երրորդ անձանց գույքի վնասում, ոչնչացում.

Տուժածի գույքին պատճառված վնասի հատուցման չափը որոշվում է՝

ա) տուժածի ամբողջ գույքի ոչնչացման դեպքում՝ ապահովագրական պատահարի օրվա դրությամբ գույքի իրական արժեքի չափով: Ամբողջական ոչնչացման տակ հասկացվում են այն դեպքերը, երբ վնասված գույքի վերանորոգումը հնարավոր չէ կամ վնասված գույքի վերանորոգման արժեքը հավասար է դրա արժեքին կամ գերազանցում է դրա արժեքը ապահովագրական պատահարի օրվա դրությամբ:

Ապահովագրական հատուցումը վճարվում է ոչնչացված գույքի իրական արժեքի չափով, բայց ապահովագրական պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Երրորդ անձանց գույքի իրական արժեքը որոշվում է՝ ելնելով հաշիվ ապրանքագրում նշված գնից, իսկ դրա բացակայության դեպքում՝ ելնելով գույքի գտնվելու վայրում նմանատիպ գույքի համար կիրառվող շուկայական գնից:

բ) տուժածի գույքի վնասման դեպքում՝ այն ծախսերի չափով, որոնք անհրաժեշտ են գույքը այնպիսի տեսքի բերելու համար, ինչպիսին այն եղել է մինչ ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահը:

Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա նշված ծախսերին են վերաբերում նյութերի և պահեստամասերի ծախսերը, որոնք անհրաժեշտ են վերանորոգման համար, այդպիսի վերանորոգման հետ կապված աշխատանքների վճարման ծախսերը:

10.4.4" ԸՍՏ ԿՈՆՏԵՅՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԱՌԱՋ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՄ ԱՌԱՔՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴՐԱ ԿՈՐՍՏԻ, ՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱՄ ՎՆԱՍՄԱՆ

ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՊԱՀՈՎԱԴԻՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ.

10.4"4.1" Կոնտեյների կորստի կամ ոչնչացման դեպքում ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում հատուցվում է կոնտեյների արժեքը, որը որոշվում է դրա իրական արժեքի հիման վրա:

Կոնտեյների ոչնչացման տակ հասկացվում է այնպիսի վնասը, որի դեպքում դրա վերականգնման համար անհրաժեշտ ծախսերը գերազանցում են դրա իրական արժեքի 90 տոկոսը:

10.4"4.2" Կոնտեյների վնասման արդյունքում հատուցվում են դրա վերականգնման ծախսերը, այն է .

- պահուստային մասերի և նյութերի արժեքը,

- վերանորոգման արժեքը,

- կոնտեյների կամ պահուստային մասերի՝ մոտակա վերանորոգման կետ փոխադրելու տրանսպորտային ծախսերը, մաքսային վճարները:

10.4"4.3" Կոնտեյների իրական արժեքը և վերականգնման ծախսերը որոշվում են ապահովագրական պատահարի պահի դրությամբ:

10.4.5" ԸՍՏ ՄԱՔՍԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ.

Համաձայն սույն ռիսկի՝ հատուցվում են այն ծախսերը, որոնք կապված են այն բեռի գծով մաքսային վճարներ հետ, որը գտնվում է մաքսային հսկողության ներքո՝ մաքսային մարմնի սահմանված վայր դրա չառաքման, առանց մաքսային մարմնի թույլտվության դրա դուրս բերման (փոխանցման) դեպքերում, երբ մաքսային օրենսդրության համաձայն մաքսային վճարների վճարման պարտավորությունը դրվում է Ապահովադրի վրա:

Մաքսային վճարներն ուշացնելու համար տույժերը հատուցվում են Ապահովագրողի կողմից ոչ ավել, քան երեք ամսվա համար:

10.4.6" ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՌԻՍԿԻ.

Ապահովադրի կողմից բեռի փրկման, վնասի չափը նվազեցնելու և սահմանելու ուղղությամբ կատարված համապատասխան ծախսերը հատուցվում են այն գումարի չափով, որը փաստացիորեն կատարվել է՝ դրա փաստաթղթային ապացուցման պայմանով: Միջոցների ձեռնարկումը, որոնց ծախսերը գերազանցում են 200000 ՀՀ դրամը, պետք է նախապես համաձայնեցված լինի Ապահովագրողի հետ: Եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, բեռի փրկման և վնասի չափի նվազեցման ծախսերը հատուցվում են ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարի համամասնորեն:

Պահանջների նվազեցման և բողոքարկման ծախսերը, այդ թվում իրավաբանական ներկայացուցչությունը դատարանում, մասնավոր խուզարկության գործակալությունների ծառայությունների օգտագործման լրացուցիչ փորձաքննությունների նշանակման ծախսերը, եթե այդպիսի ծախսերը հարուցող

գործողությունները Ապահովագրողի կողմից ճանաչվել են նպատակահարմար կամ ձեռնարկվել են Ապահովադրի կողմից Ապահովագրողի հրահանգով, հատուցվում են ամբողջ ծավալով անկախ այն բանից, գերազանցել են արդյոք դրանք ապահովագրական գումարն ըստ ռիսկի և ապահովագրության պայմանագրի:

10.4.7" ԸՍՏ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐԻ ՌԻՍԿԻ.

10.4"7.1" Բեռնված տրանսպորտային միջոցի երթևեկելի մասից դուրս գալու կամ շրջվելու դեպքում դրա և նրանում փոխադրվող բեռի բարձրացնելը և դուրս բերելը:

10.4"7.2" Մինչև մոտակա վերանորոգման կետ տրանսպորտային միջոցի տարահանման ծախսերը՝ վերջինիս ինքնուրույն շարժվելու անհնարինության դեպքում:

10.4"7.3" Տրանսպորտային պատահարից հետո բեռի մնացորդների հեռացման, ոչնչացման ծախսերը:

10.4"7.4" Բեռի ոչնչացման ծախսերը՝ ներառյալ մինչև մոտակա ոչնչացման վայր փոխադրելու արժեքը:

10.4"7.5" Հատուցվում են Ապահովադրի այն ծախսերը, որոնք հաստատված են փաստաթղթերով (պայմանագրով, հաշիվներով, վճարային փաստաթղթերով և այլն) այն գումարի չափով, որը փաստացի վճարվել է: Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, սույն ռիսկի համաձայն չեն հատուցվում Ապահովադրի Հաճախորդի կամ երրորդ անձի կրած համապատասխան ծախսերը:

10.5" Վնասված բեռի, գույքի կամ կոնտեյների վերականգնման ռիսկերի հետ կապված ապահովագրական հատուցման չափը հաշվարկելիս հաշվի է առնվում դետալների, մասերի, հանգույցների և ագրեգատների մաշվածությունը:

10.6" Պահանջի քննարկման համար անհրաժեշտ վերջին փաստաթուղթը ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավոր է որոշում ընդունել ապահովագրական հատուցման վճարելու կամ մերժելու մասին և այն ուղարկել Ապահովադրին: Ապահովագրական հատուցումը մերժելու որոշման մեջ պետք է պարզաբանվեն մերժման պատճառները:

10.7" Հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել: Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվից դրամական միջոցների դուրս գրման օրը:

ԲԱԺԻՆ 11. ՓՈԽԱԴՐՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1" Իբրև փոխադրող հանդես եկող Ապահովադրի պատասխանատվության ապահովագրությունը տարածվում է փոխադրումների վրա, որոնք իրականացվում են անմիջականորեն Ապահովադրի կողմից, փոխադրման համար առանց այլ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի մասնակցության:

Փոխադրումը պետք է իրականացվի Ապահովադրի վարորդների կողմից, այն տրանսպորտային միջոցներով, որոնք Ապահովադրի կողմից օգտագործվում են սեփականության իրավունքով կամ վարձակալության պայմանագրով (լիզինգով), ճանապարհային ուղեգրի ձևակերպմամբ:

Ապահովադրի պատասխանատվությունը սկսվում է փոխադրման համար բեռի ընդունման պահից, որը հաստատվում է Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրով սահմանվող բեռնագրի կամ տրանսպորտային բեռնագրի ձևակերպմամբ:

Ապրանքատրանսպորտային բեռնագրում պետք է նշված լինեն տրանսպորտային միջոցի պետական հաշվառման համարանիշը և վարորդի ազգանունը, Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրով սահմանվող բեռնագրում՝ տրանսպորտային միջոցի պետական հաշվառման համարանիշը և Ապահովադրի անունը «փոխադրող» դաշտում: Տրանսպորտային բեռնագիրը պետք է ստորագրված լինի վարորդի կողմից:

11.2" Ապահովագրության դիմումում կամ դրա հավելվածում Ապահովադիրը նշում է տրանսպորտային միջոցների ցանկը, որոնց միջոցով պետք է իրականացվեն փոխադրումները: Տրանսպորտային միջոցների ցանկը, որտեղ նշված են մակնիշը, մոդելը և պետական հաշվառման համարանիշը, զետեղվում է ապահովագրության պայմանագրում կամ դրա հավելվածում:

11.3" Տրանսպորտային միջոցների ցանկի փոփոխության մասին Ապահովադիրն անմիջապես գրավոր տեղեկացնում է Ապահովագրողին: Ապահովագրողի կողմից ընդունված փոփոխությունները ձևակերպվում են ի լրումն ապահովագրության պայմանագրի՝ լրացումով:

11.4" Տրանսպորտային միջոցների քանակը փոփոխվելու դեպքում՝ Ապահովագրողն իրավունք ունի կատարելու ապահովագրավճարի վերահաշվարկ:

11.5" Ապահովագրողի կողմից Կանոններով և Ապահովագրության պայմանագրով նախատեսված Ապահովադրի պատասխանատվության ռիսկի ապահովագրության հավելվածի փոփոխությունն ընդունելու պահից, այն տարածվում է այն փոխադրումների վրա, որոնք իրականացվում են նոր տրանսպորտային միջոցներով:

ԲԱԺԻՆ 12. ԱՌԱՔՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1" Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ՝

12.1.1" Ապահովագրական ծածկույթի գործողությունը չի տարածվում Ապահովադրի պատասխանատվության վրա, որն առաջացել է տրանսպորտային առաքման պայմանագրի դրույթների ուժով, որոնք Ապահովադրից պահանջում է բեռի կորստի կամ ոչնչացման համար առանց սահմանափակման պատասխանատվության ստանձնում, միջազգային պայմանագրերով և կոնվենցիաներով, կամ ազգային տրանսպորտային օրենսդրությամբ նախատեսված, կամ, այլ լրացուցիչ պատասխանատվություն սահմանելով, ինչպես նաև չի տարածվում այնպիսի պատասխանատվության վրա, որը կապված է սեփական կամ վարձակալած տրանսպորտային միջոցներով բեռների փոխադրման և սեփական կամ վարձակալած պահեստներում կամ տարածքներում բեռների պահպանման հետ:

Ընդ որում, բեռների փոխադրման և պահպանման գործունեությունը պետք է իրականացվի ներգրավված ենթակապալառուի միջոցով: Անհատ ձեռնարկատիրոջ

կարգավիճակ չունեցող ֆիզիկական անձանց որպես ենթակապալառու ներգրավելը չի թույլատրվում:

12.1.2" Ապահովադրի պատասխանատվությունը սկսվում է առաքման համար բեռի ընդունման պահից: Ապահովադրի կողմից առաքման համար բեռի ընդունումը հաստատվում է առաքման ստացականով, առաքման կամ տրանսպորտային բեռնագրով, ՖԻԱՏԱ-ի բեռնագրով, պահեստային ստացականով կամ այլ փաստաթղթի ձևակերպումով՝ տրանսպորտային առաքման պայմանագրով կամ առևտրային գործունեության սովորական պայմաններով:

12.1.3" Ապահովադրի և ենթակապալառուի միջև հարաբերությունները պետք է ձևավորվեն պայմանագրի հիման վրա: Պայմանագիրը կնքելիս Ապահովադիրը պարտավոր է ենթակապալառուից պահանջել պետական գրանցման վկայականի, հարկային մարմնում գրանցման վկայականի պատճենները, քաղվածքներ պետական ռեգիստրից (իրավաբանական անձանց համար), անձնագրի և անհատ ձեռնարկատիրոջ գրանցման վկայականի պատճենները (անհատ ձեռնարկատիրոջ համար): Արգելվում է մինչև վերոնշյալ փաստաթղթերի ներկայացնելը ենթակապալառուի հետ կնքել պայմանագիր, ինչպես նաև մինչև ենթակապալառուի հետ պայմանագրի կնքելը նրա կողմից և փոխադրում իրականացնելու պատվերի ընդունումը (հաստատումը) բեռը հանձնել փոխադրման:

Ապահովադիրը ապահովագրության պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին պետք է տրամադրի ենթակապալառուների ցուցակը՝ նշելով կազմակերպության անվանումը, գրանցման հասցեն, կոնտակտային հեռախոսը և էլ փոստը, ենթակապալառուի մոտ քաղաքացիական պատասխանատվության գործող ապահովագրության պայմանագրի առկայության մասին տեղեկությունները՝ նշելով ապահովագրական ընկերության անվանումը: Անհատ ձեռնարկատիրոջ վերաբերյալ ներկայացվում են անձնագրային տվյալները և անհատ ձեռնարկատիրոջ գրանցման վկայականի համարը: Փոխադրող կոնտրագենտների ցանկի փոփոխման դեպքում Ապահովադիրն անմիջապես գրավոր ձևով ծանուցում է Ապահովագրողին:

12.1.4" Ապահովագրության պայմանագրի հավելվածները և փոխադրողներ կոնտրագենտների ցանկի փոփոխումն Ապահովագրողի կողմից ընդունվում են Կանոնների 12.3 կետում նշված կարգով:

Եթե փոխադրող կոնտրագենտների ցանկի փոփոխումը ճանաչվում է էական, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու լրացուցիչ ապահովագրավճարի վճարում կամ ապահովագրության պայմանների փոփոխում:

12.1.5" Ապահովագրողի կողմից փոփոխված հավելվածի ընդունման պահից Ապահովադրի պատասխանատվության ռիսկի ապահովագրումը, որը նախատեսված է սույն Պայմաններով և ապահովագրության պայմանագրով, տարածվում է այն փոխադրումների վրա, որոնք իրականացվում են նոր փոխադրողներ կոնտրագենտներով:

12.1.6" Ավտոմոբիլային փոխադրումների ենթաառաքման ժամանակ որպես ենթակապալառուներ կարող են ներգրավվել միայն այն անձինք, ովքեր ունեն առաքման պատասխանատվության գործող ապահովագրություն՝ առաքվող բեռի արժեքից ոչ ցածր պատասխանատվության չափով: Ենթակապալառուի կողմից ներկայացված ապահովագրության պայմանագրի իսկության մեջ կասկածների առկայության դեպքում Ապահովագրողն իրավունք ունի դիմելու Ապահովադրին՝ ապահովագրական ծածկույթի վավերականությունը ստուգելու խնդրանքով:

Ենթաառաքման տակ հասկացվում է փոխադրումների այնպիսի կազմակերպումը, որտեղ Ապահովադրի ենթակապալառուն իրականացնում է փոխադրումը ոչ թե իր սեփական

կամ վարձակալած (լիզինգային) շարժական կազմով, այլ ներգրավում է այն շարժական կազմը, որը գրանցված է և շահագործվում է երրորդ անձանց անունից: Բեռնափոխադրման այդպիսի կազմակերպման դեպքում փաստացի փոխադրողը Ապահովադրի հետ չունի պայմանագրային հարաբերություններ:

12.1.7" Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսված լինել, որ ապահովագրությունը տարածվում է նաև տրանսպորտային առաքման գործունեության վրա, որն իրականացվում է Ապահովագրողի կողմից ընդունված պայմանագրերի պայմաններով: Այդ պայմանները պետք է ուղղակի նշված լինեն ապահովագրության պայմանագրում:

Հիշատակված պայմանագրերի պայմանների փոփոխման դեպքում Ապահովադիրը Ապահովագրողին ուղարկում է պայմանագրի նոր ձև: Ռիսկի աստիճանի փոփոխման դեպքում Ապահովագրողն իրավունք ունի իրականացնել ապահովագրավճարի վերահաշվարկ՝ ինչպես ավելացման, այնպես էլ նվազեցման ուղղությամբ:

12.1.8" Ապահովագրված անձի վրա, ով հանդես է գալիս և' որպես առաքող, և' որպես փոխադրող, տարածվում են նաև Կանոնների 12-րդ բաժնի դրույթները:

ԲԱԺԻՆ 13. ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

13.1" Ապահովագրության պայմանագրի գործողության ժամանակահատվածում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է անհապաղ տեղյակ պահել Ապահովագրողին Ապահովագրության պայմանագրի կնքման պահին իր կողմից հայտնած հանգամանքների իրեն հայտնի էական փոփոխությունների և այլ հանգամանքների մասին, որոնք էապես կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա:

13.2" Ապահովագրողը, ծանուցված լինելով այն հանգամանքների մասին, որոնք հանգեցնում են ռիսկի աստիճանի մեծացմանը, իրավունք ունի պահանջել Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխում կամ ռիսկի աստիճանի մեծացման չափին համապատասխան լրացուցիչ ապահովագրավճարի մուծում:

13.3" Ապահովադրի կողմից սույն կետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել դադարեցնել Ապահովագրության պայմանագիրը և Ապահովագրության պայմանագրի դադարեցման առնչությամբ հատուցել վնասները՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

13.4" Եթե Ապահովադիրը դեմ է պայմանների փոփոխությանը կամ լրացուցիչ ապահովագրավճարի մուծմանը, ապա Ապահովագրողն իրավունք ունի օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն պահանջել Ապահովագրության պայմանագրի լուծում:

ԲԱԺԻՆ 14. ՎՆԱՍԻ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

14.1" Ապահովագրական հատուցում վճարելուց հետո հատուցված գումարի սահմաններում Ապահովագրողին են անցնում Ապահովադրի (Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի Ապահովագրողի կողմից հատուցված վնասի պատճառման համար պատասխանատու անձի նկատմամբ:

14.2" Ապահովագրողին փոխանցված պահանջի իրավունքն իրականացվում է Ապահովադրի (Շահառուի) և պատճառված վնասի համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

14.3" Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել նրան բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են վերջինիս փոխանցված ետ պահանջի իրավունքն իրականացնելու համար:

14.4" Եթե Ապահովադիրը հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իր իրավունքից կամ այդ իրավունքի իրականացումը անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ ապահովագրական հատուցումը արդեն վճարված լինելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադրից (Շահառուից) ետ վերադարձնելու ավելորդ վճարված ապահովագրական հատուցման գումարները:

ԲԱԺԻՆ 15. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

15.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովադիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

15.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ձայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ

կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ձայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

15.3. Կետ 15. 1-ում նշված Ապահովադրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

15.4. Ապահովադրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

15.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովադիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 15"1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովադիրը (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

16.1" Կանոնների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

16.2" Վիճելի հարցերի լուծման ժամանակ Ապահովագրության պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

16.3" Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ "Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին" ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՀՀ դատարաններում: